ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 63

«28» 05 2021 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի N 49 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նոր կորոնավիրուսի համավարակի պայմաններում սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խստիվ պահպանման, նշված կանոնների խախտումների յուրաքանչյուր դեպքում արագ և առանց հապաղման արձագանքելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի հունիսի 5-ի՝ «Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգը սահմանելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի մայիսի 30-ի թիվ 20 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 49 հրամանով սահմանված կարգի 20-րդ կետի 1-ին ենթակետում ավելացնել նոր նախադասություն՝ հետևյալ խմբագրությամբ.

«Սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտման հիմքով առերևույթ կարգապահական խախտման մեջ կասկածվող դատախազը պարտավոր է սույն ենթակետով սահմանված գրավոր բացատրությունը ներկայացնել մեկօրյա ժամկետում»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ